ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 21 » հուլիսի 2026 թվականի N: 316 - Ա ք. Գյումրի

ԱԼԻՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 60-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Ալինա Ավետիսյանի 2026 թվականի հուլիսի 17-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անաշխատունակության մեջ գտնվելու կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 32 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Ալինա Ավետիսյանին տրամադրված ամենամյա արձակուրդը երկարաձգել համապատասխան օրերի քանակով:

2. Ալինա Ավետիսյանի բացակայության ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 32 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի գործառույթների իրականացումը վերապահել նույն կազմակերպության տնօրեն Արմեն Վարդանյանին՝ մինչև Ալինա Ավետիսյանի աշխատանքի ներկայանալը:

Ա.ԱՅՎԱԶՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է